

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍՈՇՄԱՆ

Հիշող թիւ ձեկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրանշման տողը
20 անդիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

"Ipravounk"

ВНА (Bulgarie)


Редакция

на вѣстникъ

"Иправункъ"

ВАРНА (България)

Գրոտիսկը եւ
չեմ տրոտիր



ՕՐՈՒՄԱՆ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ

ՍՐԵԻՆԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ

Բ.

Մարտ 10ին ու 11ին, Ֆրանսայի Երեսփ. Ժողովոյն մէջ, երկրին արտաքին քաղաքականութեան ընդհանուր վիճարանութեանը միջոցին, Արեւելեան խնդրոյն վրայ տեղի ունեցաւ մեծ հարցապնդում մը, որուն կը մասնակցէին Ֆրանսացի կարգ մը ազգեցիկ երեսփոխաններ. բայց, մինչդեռ Անգլիոյ թէ՛ Երեսփ. Ժողովոյն ու թէ՛ Լորտերու բարձր խորհրդարանին մէջ՝ Արեւելքի խնդրոյն նուիրուած վիճարանութեանց ատեն, թէ՛ առեւտրախօսները — նախարարական թէ՛ ընդգրկածները — և թէ՛ կառավարութեան, ներկայացուցիչները ուղղակի կամ անուղղակի կերպով, ու կարծես հպատակելով մէկ մասնաւոր հրահանգի մը, նախապէս տրուած նշանաբանի մը, կը զգուշանային ամենափոքր ակնարկութիւն մը իսկ ընելու հայկական խնդրոյն, հայկական կոտորածներու կամ Պոլսին Դաշինքին ճիշդ յօդուածին վրայ, — նոյն խնդրոյ վրայ, ու գուցէ նոյն վայրկեանին, Ֆրանսական խորհրդարանին մէջ խօսող երեսփոխանները, առանց կուսակցական խտրութեան, միաձայնութեամբ իրենց կառավարութեան ուղադրութիւնը կը հրահանգէին հայկական խնդրոյ կարգադրութեան ալ վրայ, որ հակառակ նախապատուութեան իրաւունք ստանալու իր չարաշուք անցեալին, այսպէս անարգարութեամբ կարհամարհուէր:

Հայկական կոտորածներու թուականէն ի վեր, Թուրքիոյ վերաբերութեամբ Անգլիոյ ու Ֆրանսայի հետեւած քաղաքականութեանց մէջը մեծ փոփոխութիւն մը կը նշմարուի. գիտենք թէ, 95—96ի պատահարներուն ատենը, Անգլիոյ թէ՛ ժողովուրդը, թէ՛ մամուլը, ու թէ՛ կառավարութիւնը զէպի հայ ժողովուրդին դատը ո՛րքան համակիր վերաբերում մը ցոյց

կուտային. ընդհակառակն, Ֆրանսայ, շնորհիւ կապրիէլ Հանօդոյի ջանքերուն, հիմնապէս ներհակ ուղղութեան մը կը հետեւէր. բայց, մինչդեռ Անգլիոյ մէջ՝ ժամանակին հետ հետզհետէ սկսան շոգիանալ այդ համակրանքի աւելի կամ նուազ կեղծ արտայայտութիւնները — մանաւանդ 1900ի երեսփոխանական ընտրութիւններէն ասդին, որ ատեն ազատական (ընդգրկածներ) երեսփոխանները, հայկական խնդրոյ մէջ կառավարութեան հետեւած քաղաքականութիւնը իրենց մատը փաթթած, ու կուսակցական շահագործումի մը հետամուտ, Հայաստանի վրայ իրենց գերիշխան փամփուշտները կապառէին — Ֆրանսայի հանրային կարծիքին մէջը, Թուրքիոյ հարստահարեալ ժողովուրդներուն ինպաստ տեղի կուտենար փոփոխութիւն մը, որ հզօրապէս կառավարութեան քաղաքականութեանը վրայ պիտի ազդէր:

Ջարգերէն ասդին, Անգլիոյ կառավարութիւնը հայերու ինպաստ ոչ մէկ ձեռնարկ փորձեց, ոչ մէկ յիշատակելի յայտարարութիւն ըրաւ. այսօր, Անգլիոյ կառավարութիւնը հայկական խնդրը բոլորովին մոռցած ըլլալ կը ձեւացնէ, ու Մակեդոնիոյ խնդրոյն մէջ ալ յայտնապէս աւելի հակակիր քան համակիր քաղաքականութեան մը կը հետեւի. արտաքին գործերու նախարար՝ Լորտ Լանստօունի՝ լորտերու ժողովոյն մէջ արտասանած ճառը ու Դիքին Դիքին հրատարակութիւնը այս մասին տարակոյս չեն թողուր. Այնպէս որ, մօտաւոր ապագայի մը մէջ գուցէ անկարելի չըլլայ տեսնել Բալթիքի ռու Պիքնս. ֆիլտի թրքասիրական լիրք քաղաքականութեան վերակենդանացումը:

Գալով Ֆրանսայի, հոս հանրային կարծիքը, շնորհիւ հոյ մը հրապարակագիրներու յարատեւ գործունէութեանը, այնքան զօրեղ ազդեցութիւն մը կրեց, որ կառավարութիւնը, հակառակ իրեն համար մահու և կեանքի խնդիր նկատուող Ֆրանսական զինուորական կորուստներու փոխարէն, հոյութեանը ու և է

վտանգ չի բերելու իր ամենափափուկ դիրքին, վերջին տարիներու մէջ, Երոպայի բոլոր Պետութեանց մէջէն Թուրքիոյ հարստահարեալ ժողովուրդներուն ինպաստ, գոնէ երեսփոխանական գործելու ամենէն աւելի հակառակ տեղի. հանրային կարծիքին մէջ ընդհանրապէս վերաբերող խնդրոյն ներքին շոյ մին ներքին Ֆրանսայի արտաքին գործերու առաջին նախարարը հարկ տեսաւ, պատրաստուած կոտորածի մը առաջը առնելու համար, մէկ քանի զրահանաւեր կիլիկիոյ շուրջը ուղարկել ու հայաբնակ կարգ մը նահանգներու մէջ ալ իր հիւպատոսներուն թիւը ստուարացնել. բայց մանաւանդ մակեդոնական խնդրոյն մէջ Ֆրանսական դիւանագիտութեան ունեցած նախաձեռնութիւնը ուղադրուէ. Լիբանանէ ետք, կրէտէի ազատագրութեան մէջ ալ Ֆրանսա արդէն գերակշիռ դեր մը ունեցած է. Դիքին Դիքին ցոյց կուտայ թէ, Մակեդոնիոյ խնդրին պետութեանց կողմէ ձեռք առնուելուն ալ նախապատճառը եղած է Ֆրանսա. Մ. Տէլքասէ, Մակեդոնիոյ յոռի վարչութեան վրայ իր հիւպատոսներուն տեղեկագիրներուն ծանօթանալէ ետք, նախ Բէդրսպուրկի հետ բանակցութեան մտնելով, յաջողած է երկու դաշնակից դիւանագիտութեանց միջեւ մակեդոնական բարեկարգութեանց նախաձեռնութիւնը մշակել. անցեալին մէջ՝ եւրոպական պետութեանց մէջէն, Ֆրանսա ու Ռուսիա մէկէ աւելի անգամներ արդէն աշխատեցան Օսմանեան լուծը թօթափելու հետամուտ. Թուրքիոյ քրիստոնեայ ժողովուրդներուն ազատագրական ճիգերուն, մինչդեռ Անգլիա միշտ նոյն քրիստոնեայ ժողովուրդներուն ջանքերուն մոլեգնօրէն ընդգրկմացած է. այժմ, այս երկու պետութիւնները կը թուին Մակեդոնիոյ հարցն ալ ձեռք առած ըլլալ. Թուրքիոյ քրիստոնեայ ժողովուրդներուն ազատագրութեանը մէջ անոնց անցեալ վարձուքը երաշխաւորութիւն իր կրնայ ըլլալ թէ, գուցէ անոնք վերջը վերջը Մակեդոնիոյ համար ալ բան մը ընեն, հակառակ ու

րիշ պետութեանց ընդգրկման առաջին Գալով հայկական խնդրին, ա. մէջնին ալ գիտենք թէ՛ եթէ Ռուսիա օր մը ու և է կերպով պիտի ազատէ Մակեդոնիան, որ սլաւոնացի կը սեռի, ռուսներէն մօտ լեզու մը կը խօսի ու Օրթօօքս կրօնքը կը դաւանի, հայկական խնդրոյ նկատմամբ անոր բարեացակամութիւնը ձեռք ձգելը շատ աւելի դժուարին, նոյնիսկ ոմանց համար անկարելի խնդիր մըն է. առանց Ռուսիոյ հաւանութեանը ալ, Ֆրանսա քայլ մը չէ կարող առնել. ու սակայն անցեալ պատմութիւնը, ինչպէս ներկային քաղաքական կացութիւնը, ունենալով կարծիքներ մտածողի մը համար զոյացնել կուտայ թէ, եթէ հայերու համար ու և է կողմէ բան մը սպասել պէտք է, այն ալ Ֆրանսայի ու Ռուսիոյ կողմէ կըրնայ սպասուիլ. որպէս զի հայաբնակ Կապադոքիոյ ըլլալ իսկ ձեկ մասին հաւանք բան մը իրագործել կարելի ըլլայ, Ռուսիոյ հաւանութիւնը տիրականօրէն հարկաւոր է:

Տ. Է.

ՍԱՏԱՎԱՆ ԽՄԲԱԳԻՐԸ ԵՒ ԻՐ ԶՈՒՋԱԿԱՆ ՍՈՒՏԸ

Թերթ անունին տակ հրատարակուող, բայց բարեբաղդաբար հրապարակի միայն մէկ քանի անգիւնները աղտոտող ծանօթ գործութեանց պարկին տարիներէ ի վեր ձեռք չը դպցնելու և գոյութիւնը իսկ անգիտանալու որոշման հակառակ, երէկ մէկ բարեկամս ինքն իրեն թողաւորեց զայն իմ ներկայութեանս կարդալ:

Հոն լսեցի թէ, բարոյապէս սատկած խմբագիրը՝ զինք կերակրող խնամի-զոյգին նոր գազափոխմէն խելայեղ, իր աղբանոցին վերջին թիւին մէջ մեր հասցէին երեք յօդուածաձեւ գործութիւններ զետեղել է, գործութիւններ՝ որոնց նմանը չեմ կարծեր որ երբեք մարդկային աղիք մը արտադրած ըլլայ, ինչ որ միայն վարդոյի մը

կոկորդէն կրնար ժայթքել, յայտնի ազգային գործիչներու միջեւ նոր պառակտումներ օտեղծելու ցած նպատակաւ:

Ձը պիտի զիջանիմ հոս ուղղակի պատասխանել այդ բարոյապէս սատկածին. այլ միայն հրապարակ պիտի դնեմ իմ և իմ թերթիս, իրաւունքի, դէպի հայ յեղափոխութիւնը ունեցած այն պատուաբեր վերաբերմամբ, զոր կը խոստովանի ու կը հաստատէ Հնչակեան Միացեալ Կեդրոնը իր հետեւեալ պաշտօնական նամակով, որը իմ մէկ հարցումիս ի պատասխան ինձ ուղղուած էր Կեդրոնի վերջին երկպառակութեան առաջ:

ՀԵՅ, ԿՈՒՍԱԿՑ. ԿԵՆՏՐՈՆ
Հօնոսն
Պատ. Խմբ. Իրաւունքի
Վառնա

Ստացանք ձեր 20 Օգոստոս թուակիր բաց նամակը:

Հնչակեան Միութեան իրազդրածումով, կեդրոնական ուրոյն վարչութիւններ այլեւս գոյութիւն ունենալէ դադարած ըլլալով, չպիտի կրնանք անցեալին մէջ անջատարար պատահած ո՛ր եւ է խնդրոյ մասին ձեզ պատասխանել:

Կուզենք միայն կրկնել թէ, «վարկաբեկութիւն» զրուցութիւնը Հնչակեան Կուսակցութեան սկզբունքին ու բարոյականին դէմ է:

Ներկայ Կեդրոնական վարչութիւնը Իրաւունքի մասին բարեկամական զգացումներ միայն կը տածէ, եւ ո՛ր եւ է պատճառ չպիտի ունենայ իր այդ զգացումները փոխելու, որքան ահեկ «Իրաւունք» զօրավիճ մնայ հայ յեղափոխութեան: (*) Եւ չը փորձէ խոչընդոտ

(*) Հայկական յեղափոխութեան այդ բարձրագոյն մարմինը ահա պաշտօնապէս կը հաստատէ թէ Իրաւունք ցարդ զօրավիճ եղած է հայ յեղափոխութեան:

Այլ ի՞նչ նշանակութիւն ունի սատկածի մը հայեւնը:

յարուցանել Հնչակեան գործունէութեան առջեւ:

Հնչակեան Կուսակցութեան
Կեդրոնական վարչութեան կողմէն
Ատենապետ Ատենապետ
Վ. Զարմայր Արսամազ
Լոնտոն, 11 Սեպտեմբեր 1902
(Կնիք)

Միմիայն սեռայնկոն, ստեղծու զրպարտելու և այդպէսով, կարգ մը ապուշներու շնորհիւ, իր կաշին քաշքշելու նպատակաւ, ազգին դժբախտութեան խմբագիր կոչուող այդ բարոյապէս սատկածը այս անգամ կրկին ելած է Հոգնոգ թուրքերէն թերթով զբաղի: (**)

Ե. Երեմիա՝ Է Հոգնոգի մէջ

(**) Ընթերցողը կը յիշէ թէ, 28 սնտուկի եւ տիկնանց մասնախումբի խաչագողութիւնները մերկացնելու հետեւեալ օրը, հանրութեան ուշադրութիւնը այդ սոսկալի զեղծումներէն վերաբեկելու նպատակաւ, սատակ-խմբագիրը Հոգնոգի մի խնդիր մէջտեղ նետեց, ու ջանջախոնքացաւ: Անկէ տարի մը վերջ, նոյն սատկածին մոտերիմ ու փոխանորդ Լիւոն Սարգիսեանի մատնութեան նամակին խնդիրը երբ յուզեցնիք ու հարուածեցինք, նոյն սատկած-խմբագիրը հանրութեան ուշադրութիւնը այդ մատնութեան վերաբեկելու նպատակաւ, կրկին Հոգնոգի խնդիր մէջտեղ նետեց, իրեն գործիք Արթուր Կանոնով յիշատակող ու գոհնիկ թուումպաճի մը ստորագրութեամբ, եւ կրկին ջանջախոնքացաւ:

Ահա այս անգամ այլ երբ այդ բարոյապէս ու նիւթապէս սատկած-խմբագիրը տեսած թէ իր տունին ու թերթին ծախքը մատակարարող թաղական զոյգը գործած այլադակութիւններուն համար անխնայ կը հարուածենք (ինչ որ Պոլսոյ թերթերն ալ կրնան ահա), երրորդ անգամ ըլլալով ելաւ Հոգնոգը նորէն մէջտեղ նետել, յուսալով թէ ատով ժողովուրդին ուշադրութիւնը պիտի վերաբեկնէ իր չօրպաճիներուն սխալ-գործութիւններէն: Ի զո՛ւր...

երբեք զոյութիւն չունեցող հետեւեալ սուտը:

Ասիա. (Հայաստան) Ըսուած վայրը մեր նախահարց սուրբ արիւնով առած ենք, ուստի չենք կրնար վատ հայերուն տալ... այն հայտութիւնը (յեղափոխականները) թրէ անցնելու եւ մեր օրհնեալ հողը անոնց անիծեալ ձեռքը չը յանձնելու համար, զանոնք ոչնչացնելու ենք:

Այս տեսակ գարշելի ու բացարձակ սուտ մը չէ կարելի երեւակայել որ վառնացի մը կամ ուրիշ հայ մը յղանայ, բացի վարդոյի նման հրէածին արարածէ մը:

Այս լիտի սուտը յերիւրոյց գոնէ համարձակութիւնը չէ ունեցող ցոյց տալու թէ Հոգնոգի ո՛ր թիւին, ո՛ր տողին մէջ այդ բառերը գործածուած են:

Արդ, կը յայտարարենք թէ, հետաքրքրուողները կրնան մինչեւ 15 օր մեր խմբագրատունը գալ ու Հոգնոգի թիւերը ոչ չէ անցնել, որով իրենք ալ պիտի հաստատեն թէ ա. դ. բ. ն. հ. չէ չէ չէ, ու պոգալի սուտ մըն է:

Եւ այս չ. փով միայն չպիտի ձգեմ ո՛չ վարդոյի օւ ո՛չ իր շիւխտաւոր գործիքին օճիքը. իրենց այդ կեղծարարութեան ու զրպարտութեան ստիճիւ, պիտի պահանջեմ որ ցոյց տան թէ Հոգնոգի ո՛ր թիւին, ո՛ր սիւնակին մէջ այդ պոգալի տողերը գրուած են:

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՁԸ

Սոսեղի Շահասկոյի մը խորագրով, Պոլսոյ Սուրհանդակ թերթի վերջին թիւերէն մէկուն մէջ կը գրէ. «Կարգ մը անսիրտ մարդեր, աղքատ եւ անոք տղաքներ (որքեր) խնամելու մարդասիրական գործը սկսած են կեղծել: Գրանք մը անգամներ գրե-

ցինք օտար քաղաքներու մէջ երեւան ելած կեղծ աղքատախնամներու (որքախնամներու) նկատմամբ. սակայն պէտք է ըսել թէ բաւական տրոօրինակ վիճակ մը կը պարզէ վառնայի թաղ. Սորհուրդը, որ այս օրերս հերքումներ կը տեղացնէ Պոլսոյ թերթերուն, բոլորովին խեղաթիւրելով իր մասին եղած ամբաստանութիւնը, իրեն թէ Պոլսոյ թերթերը Սարգիս քահանան կամբաստանեն եղեր, որ հանգանակութեան մէջ շահադիտութիւն գործադրելու ելեր է: Այդպէս չէ սակայն իրողութիւնը: Վառնայի թաղ. Սորհուրդը, յանուն տեղւոյն մէջ գտնուած պատասպարանի մը, հանգանակութեան տուած մը տուելի է Սարգիս քահանային, որ առջ անդ պտտուելով եւ հայրապետական յանձնարարութիւնը յիշելով, զրամ կը հաւաքէ: Մենք կը հարցնենք թաղ. Սորհուրդին. ո՛ր է այդ վառնայի հաստատութիւնը. քանի՞ տղայ կայ հոն. քաղաքին ո՛ր կողմը կը գտնուի: Դիմք փոխանակ ասոնց պատասխանը տալու, եւր է խել մը պարապ խօսքերով, իբր թէ Սարգիս քահանայի պատարել կը պաշտպանէ ու այդ կերպով կը ջանայ ինքզինքը արդարացնել: Թաղ. Սորհուրդը կըսէ եղեր (անպաշտօն կերպով հարկաւ) որ այդ հաւաքուած գումարով կալուած չինել պիտի տայ. ինչո՞ւ ուրիշ իրողութիւնը չի գրեր, եւ պատասպարանին անունը առարկայ է ըրեր իր այդ մտադրութիւնը յաջողցնելու: Պաշտօնական մարմինը մը կը վայելէ՞ այդ կերպ անգոյ հաստատութիւններու անունով գրած հաւաքել: Պէտք է զգուշանալ հասարակութիւնը գայթակղեցնել այդպիսի նուիրական գործի մը մէջ. որովհետեւ եթէ անգամ մը մտքերը չիփոխին, զժողովը կը լլայ ուղղել եւ այլեւս նպաստ առնել այդ նպատակաւ, մինչդեռ հասարակաց նպատակն եւ բարեգլխութեան կը կարծուի անոք տղայաց պատասպարութեան եւ դատարարական գործը»:

Միւս կողմէ, «Խաչագող Քանաւ»

Ա. ԵՐԵՎԱՆԵԱՆ (68)

ԹԻՍՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ
ՆԵՐՆԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐ

— Պիւսոն, ըլլա՛յ Արեւելեանը, ըլլա՛յ Արեւմտեանը, ներքին հաղորդակցութեան մէջ է երկրին բոլոր Մամաճիկեղերուն հետ:

— Ի՞նչու համար տեղի ունեցաւ ձեր մէջ այս տեսակ կուսակցական բաժանում մը, ընդմիջեց Ներսէս Արծրունին:

— Պատճառը Կեդրոնական կուսակցութեան մը գլուխը գտնուող Պետին ընթացքն էր որ անտանկե եղած էր:

— Ձե՛ք որ այդ մարդը դարձեալ կուսակցութեան մը գլուխը կը գտնուի եւ անազնի թուով համախոհներ ունի:

— Այո՛, ճշմարիտ է ասիկա... բայց զիտցէ՛ք որ չատ չտեսնէ՛ք պիտի տապալի իր բարձրութեան վար:

— Միմա՞կ այդ մարդուն համար բաժնեկցար:

— Գլխաւոր պատճառը ան էր. յետո՛յ կեդրոնա-

կան կուսակցութիւն մը պարզապէս միապետներ ստեղծելու պիտի ծառայէ: Գրանք որ ազատութեան ուղին նետուեցանք, քանի որ մեր անհատական իրաւունքը բռնաբարող կառավարութեան մը դէմ մաքառելու հարկադրուեցանք, ի՞նչու համար Մուստաֆա, Հալիմ ու Համիտ փաշաներու տեղ՝ Միհրան, Վահան ու Սուլէյ իխաններ ունենալու աշխատինք, որոնք մեր արտաքին մարմինն վրայ փառելու տեղ, մեր ներքին զոյութեան մէջ պիտի մտնեն ու այնպէ՛ս մեր արեւնը պիտի ծծեն:

— Ապակեղրոնացեալ կուսակցութիւն մը պիտի յաջողի՞ հիմնել այս տեսակ ազատ կառավարութիւն մը:

— Ամենայն վստահութեամբ:

— Շատ աղէ՛կ, ի՞նչ պիտի ընէ ան ատեն ձեր հակառակորդ կուսակցութիւնը:

— Ժամանակ մը պիտի քաշկուտէ իր գոյութիւնը... մինչեւ որ ժողովուրդը հասկնայ մեր երկուքուս մէջ տիրող անազնի տարբերութիւնն ու վստահարար մեր ետեւէն գայ:

— Երբ դուք այսպէս կը մտածէ՛ք պարո՛ն, գիտէ՛ք թէ թուրքն ալ ի՞նչ կը մտածէ:

Երկուստեք մարմինը փուշ փուշ եղաւ...

— Ըստ իս, այդ կերպ մտածելու ժամանակը չէ, յարեց Ներսէս Արծրունին խաղաղ ձայնով մը: Գուրտեր, օրոնք մարմինի հրացաններով կը զինուին թուրքեր Մահմետական անարգ ոգով մեզի դէմ կը զրգուտին, ատոնք ծրարելէ չեն հասկնար... ատոնք կեդրոնացում եւ սոպակեղրոնացում բառերու տարբերութիւնը չեն փնտրեր, չեն ըսեր թէ՛ հայերը թող կուսակցական ծրագրներու ուղղութեամբ կա-

նոնաւորեն ու այնպէս մեր դէմը գան: Ո՛չ, թշնամին կը քալէ... կը յառաջանայ... մինչեւ իսկ կը վազէ գիշեր ու, ցերեկ... Միթէ՞ Ամեն կողմէ ջարդերու մատնակի կոտորածներու եւ մահաւանդ քստմնելի չարագործութեանց ուժը չհասնիր ձեր ականջին...:

— Ի՞նչպէս չէ... բայց կը կարծէ՞ք թէ կուսակցութիւնը նկատի չառնէր այդ աղետալ պարագաներու պատասխանատուութիւնը: Մինք, ի հակիչ, կիմանանք եղածներն, եւ մեր ձեռքէն եկածը չենք խնայել: Մահաւանդ երբ դու քիչ ատեն է որ կազմակերպուած է մեր կուսակցութիւնն, ի՞նչ կրնայ ընել...:

— Ըսել է թէ կը յուսաք զօրաւոր ուժ մը ունենալ ու այնպէս ձեր նպատակին հասնելու յաջողիլ, չէ՞:

— Այո՛... եւ ատիկա չատ հեռու չէ, բարեկամս:

— Աղէ՛կ... բայց պիտի հրամայէ՞ք սա քուրտուրուն որ չլնան, չը դարձնեն ու չը բռնաբարեն մեր գեղերը. պիտի հրամայէ՞ք կառավարութեան որ Համիտի վաշտիկը չկապուակարէ... մինչեւ որ ձեր կուսակցութիւնն ուժ քիչ մը տեղը գայ ու դուք ալ Համիտի վաշտիկը դէմ հայրուկային խուճիկ համելու պատրաստուիք...:

Երկուստեք ջանջախոնք ու այլալայժմ կերպարանքով Ներսէս Արծրունիի երեսը նայեցաւ ու թոթովեց:

— Կարելի՞ է հրամայել...:

— Ի՞նչ գիտնամ... կրնան թէ մեծ պետութիւններու ներկայացուցիչները չատ անդամ վերջնապիւր մը կուտան թուրք կառավարութեան եւ ատանկով

նան» խորագրով Բիշգանդիոն կը գրէ:

Տ. Սարգիս նոր հնարք մը կը խորհի վառնայի թաղ. Խորհրդոյ հետ. անոնց վախ ալիւտէն բարեբերու համար, յանձնառու կըլլալ թէ՛ Պատրիարքարան եւ թէ՛ ծերունազարդ հայրապետը խաբելու, առանց խղճաւ հարուստան, առանց ակնածելու եւ հակառակ իր քահանայական կոչման: Երկու նամակներ կը խմբագրէ իբր թաղ. Խորհուրդոյ քարտուղար, մին ուղղեալ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, եւ միւսը Ս. Հայրապետին՝ որով մանաւանդ ինք կը բացատրէ վառնայի մէջ գոյութիւնը չունեցող պատուարանի եւ ընդ նմին պատուարեալ տղոց նիւթապէս եւ ֆիզիքապէս արգահատելի վիճակը, չեղեւոր, ինչպատ նոյն հաստատութեան հանգանակութիւն մը ընելու անհրաժեշտ պէտքը. եւ անա այս առթիւ զիմում կընէ Ս. Կաթողիկոսին, որպէս զի ժապաւինեալ տոմար մը նորին Ս. Օծութեան վառնային, եւ շրջաբերական կոնդակ մը տրուին, որպէս զի ժամանակին հոգացուի տղոց նիւթական պէտքերը: Ս. Պատրիարքէն ալ կը խնդրուի պարտաւարանք բարեբոսութիւններ ընել Ս. Հայրապետին, յանուն վառնայի մէջ հաստատեալ անգոյ պատուարանին. սոյն խնդրագիրը կուղղուի փոստով, եւ իր սպասուած արդիւնքը կունենայ յարմար ժամանակին: Ս. Պատրիարք Հայրը խաբուելով վառնային եւ ինք թաղ. Խորհրդոյ պաշտօնականներէն իրմէն, առանց երկմտելու կը փութացնէ Հայրապետին իր բարեխօսութիւններն, որք մեծ արժէք ունին յայտն. Ս. Օծութեան:

Տէր Սարգիս իր թաղականներովը մանաւրէն երկած եւ գործին մէջէն յաջողութեամբ դուրս գալու յաւակնոտ թոխներ առած, իր ծոցիկը կը դնէ Ն. Ս. Օծութեան ուղղեալ խնդրագիրն եւ մեր ջիւղալ թաղականներու կողմէ Տէր Պապային ինքնութիւնն հաստատող վկայագիրը, կը մեկնի ուղղակի Եջմիածին, կը ներ-

կայանայ Ս. Հայրապետին, որբասանական ճարպիկ ու ճապուկ, ձեւերով կը նկարագրէ վառնայի օղային պատուարանին նիւթական տագնապալի եւ ընդ նմին պատուարեւորող թաղի կացութիւնն, անմիջական դարձան կը խնդրէ:

Ս. Կաթողիկոսը կը հաւատայ իր հոգեւոր պետ խաբելու համարձակող Տէր պապային վարպետորդի ու շրջումող ձեւերուն եւ առանց ժամանակ անցնելու, կը յանձնէ վառնայեալ ժապաւինեալ Տոմարն ու Կոնդակը: Երբ մեր հնարագէտ քահանան խաբեց Ս. Պատրիարք հայրը, խաբեց Ս. Հայրապետը, ուրեմն սյուսն շատ հեշտ է խաբել հասարակութիւնը:

Անոր տղայոց պաշտպան իրրեւ երկրորդ թումանան մը, կը շրջի Ռուսիոյ մէջ շատ մը քաղաքներ եւ կը հաւաքէ ըստ ժապաւինեալ Տոմարի 4000 յանգանքներ թուելի եւ երբ լրացուցած, առաջ փառք կը դառնայ վառնայ, հաշիւ կուտայ իր մեղսակից թաղականաց 1388 թուրի 50 կոպէկի, եւ անկէջ ալ յետո կը պահանջէ 250 թուրի իբր՝ ճանապարհածախս, երբ թաղականները Տոմարի համեմատ 4000 թուրի կը պահանջեն, իր տգիտութիւնն ու անճարակութիւնն այս պարագային տակ միայն յայտնի կընէ, ըսելով—Մի՛ նայիք դուք Տոմարի հաշիւին, այդ ձեւակերպութիւնը ես ներմուծած եմ տոմարի մէջ 5ը 25ի փոխելով եւ 10ը 100ի: Արդարեւ շատ զարմանալի են սա քահանային գեղծումներն որ կը համարձակի ժապաւինեալ Տոմարին մէջ գրիչ իաղցնել եւ իր բերանով այդ անմարտելի սխալը խոծողանելու համար շատ պինդ երես պէտք է: Եթէ այսպէս իրթայ, Տէր Սարգիսի մածոնը պակասին շատ ջուր կը վերցնէ:

Խնդիրն այս է որ, իրենց յանցանքը քաւելու համար գէթ հաստատուի թաղական սղաններն այդ գանձուած 1388 թուրիին Պատրիարքարանի պիտի յանձնեն իր նպատակին գործածութիւն, թէ ո՛չ, — անշուշտ պատասխանը ժխտական է, քանի որ Գէղէնի գլխաւորէն չոր գլխաւոր ունեցող չորպաճները, ոգի ի բոլին հակառակ են աղքատ տղաքները խնամելուն:

Վերոյիշեալ թաղ. Խորհուրդն է որ, իրեն գործիք ըրած հէք տղոց անունը շահագործող խարդախ ու խաբեայ քահանային, բարոյական քաջալիրութիւն կը պահանջէ: Երեսնայն ընկիւք չկայ: Այս նորահնար խաչագողութիւնը Ս. Պատրիարք հօր նկատողութեան կը յանձնենք:

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ
ՊԱՐԱՀԱՆԴԵՍԻ ԵՒ
ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ

Ի նպաստ
Ազգային երկսեռ վարժարանաց
ՌՈՒՍՏՈՒԳԻ

ՄՈՒՏԻ	Ֆր.Սն.
Երեւանի վիճակահանութիւն	1852.—
Տեղական վիճակահանութիւն	354.—
Նուէր Եւրոպայէ	53.80
Մուտք պարահանդէսէ	497.—
Հասոյթ քարթերէ	28.25
Հասոյթ հանդերձապահէ	10.15
Շահ Աճիւթ	12.70
	2807.90

ԵԼԻՔ
Ֆր.Սն.

Երեւանի վիճակահանութեան ծախք	248.40
Մարխ պարահանդէսի	
Նուագածու	45.—
Աշխատող	44.40
Ձանազանք	47.90
Տպագրութիւն	24.10
Քարթերի	20.20
Նիւթերու	42.80
Ձուտ հասոյթ ոսկի ֆրանք	1095.—
Արծաթ ֆրանք	1240.10
	2807.90

Հոգաբարձութիւն
Երկսեռ վարժարանաց
(Կնիք)
Ռուստուգ, 8 Մարտ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Վաղը, կիրակի, տեղի կունենայ Պոլսոյ Եւտի Գուլէի Ազգ. Հիւանդանոցին տարեկան մեծ նուագահանդէսը. նուագահանդէսը կազմակերպող կարգադիր մասնա. նախուժը հոգ տարած է որ այս նուագահանդէսը իր կատարելութեամբ գերազանցէ վերջին ձեւութեան մէջ կազմակերպուած բոլոր նուագահանդէսները:

— Պոլսոյ կրօն. Ժողովը իսպառ քահանայագործութենէ կը դադարեցնէ Ռուսմանիոյ թրքաօգնաբա. զաքի Տ. Ղեւոնդ քահանան, որ ինչպէս կը յիշուի, իր երէց կնոջ եղբոր թաղումը դրամական պատ. ճանկերով Ռուսմէն քահանաներու կատարել տուած է. այս առթիւ, Ռուսմանիա եւ Պուլկարիա Պատրիարքին կողմէ շրջաբերական մը պիտի ուղարկուի:

— Ինչպէս որ ծանուցած էինք, հինգշաբթի երեկոյ, ՍԱՆԴՐԱԼԻ մէջ Հնչակեան երկու ծանօթ գործիչները, Պ. Պ. Խուշպուրիան ու Չիլիճեան, երկրորդ անգամ ըլլալով բանախօսութիւններ ըրին. սրահը այս անգամ ունկնդիրներով լեցուած էր. նախ խօսեցաւ Պ. Խուշպուրիան, բացատրելով ջանաւոր 1) թէ ի՞նչ կրնայ ըլլալ հայ յեղափոխութեան նպատակը, հայ Ժողովուրդին զգացումներուն հետ համապատասխան. 2) թէ որո՞նք են այն միջոցները, որոնք մեզի ապահովաբար կը տանին դէպի այդ նպատակին իրազդործումին: Այս առթիւ, համակրելի եւ պերճաբան բանախօսը, հետզհետէ քննելով, 15 տարիէ ի վեր հայ յեղափոխութեան կրած զանազան կերպարանա. փոխութիւնները, վեր հանեց Ներ-

կը յաջողին մեծ դեր մը խաղալ ու... ու նկատուի տուած Ներսէս Արծրունին իր հեգնական ձեւը չը փոխելով:

— Ատանկ իրաւասութիւն մըն ալ դրուած է մեզի:

— Չէ՞ դրուած:

— Երբէ՞ք:

— Չէ՞ որ դուք ալ լիազօր ներկայացուցիչ մըն էք, պարո՞ն:

— Իրաւ է... բայց յեղափոխական կուսակցութեան մը հիմնած կառավարութիւնը պաշտօնապէս ճանչցուած չէ, որ անոր ներկայացուցիչներու ձայնն ալ մեծ ազդեցութիւն մը ունենայ: Երբ Եւրոպայի գիւտանալիական շրջանակներու մէջ Հայկական Անկախութեան ձայնը լսուի, երբ մեծ պետութիւնները վաւերացնեն մեր Ազատութիւնը, այն ատեն մեր ծանուցագիրը, մեր սպանաւորները քուրտներուն ու թուրքերուն վրայ կընան ազդել:

— Ո՛հ, ցաւալի բան... մենք վեղացիներս, շատ միամիտ ենք եղեր որ կը հաւատայինք թէ քաղաքը գտնուող մեր կուսակցութեանց ներկայացուցիչները մեծ ձայն ու ազդեցութիւն կընան բանեցնել թուրք կառավարութեան վրայ: Աղէ՛կ, գոնէ միջոց մը խորհեցէք... ի՞նչ ընենք սա քուրտ պէկերու հետ: Բերանին արին կը հոտի: Գաղանի մը պէս մեզ յուշտել կուզեն: Ո՛հ գիշեր, ո՛չ ցերեկ եւ ո՛չ ալ մէկ անգամ հանգիստ ենք... Իրենցն է մեր ստացուածը... Իրենցն է մեր աշխատութեամբ ձեռք բերած օրապահիկը... մէկ խառնով՝ իրենցն է մեր պատուը... Չենք կրնար գիմանալ... ի՞նչ ընենք:

— Ո՛հ, բարեկամս առանկ մի մտածէք: Գիտցէք որ յեղափոխական կուսակցութեան մը ներկայացու-

ցիչը չը կրնար ուրիշ կերպով ազդեցութիւն բանեցնել թուրք կառավարութեան վրայ, եթէ ո՛չ՝ րանութեան դէմ ընդդէմ, արեւելի դէմ արեւելի, վերջապէս ուժի դէմ ուժ գործածելով:

— Զիչք մեր ուղածն ալ այդ է, պարո՞ն: Մենք ղեկացնելու, ալ համբերելու ոչ ուժ ունինք, ոչ տրամադրութիւն: Գիտցէք որ յուսահատութիւնը շատ բան կընէ... եւ մենք ամենքս ալ՝ յուսահատած ենք: Ահա այդ պատճառաւ Ներսէս Արծրունին ձեզի զրկեց զիս որ հասկնամ թէ ի՞նչ տրամադրութիւն ունիք... Ի՞նչ կը մտածէք ներկայ պարագաներուն մէջ եւ միշտ եւ՛րբ պիտի լռէք:

Երիտասարդը նորէն լուռ մնաց: Իր հրատապ գանկին տակ մտածում մը կար, զոր յայտնելու չէր համարձակէր: Օ՛հ, կը զգար թէ իր գէմը գտնուող մարդը պարզ գեղացի մը չէր... այլ՝ դատարարական զարգացած մէկը կերեւար ան:

— Կեցէ՛ք... միմիջեց երիտասարդը ձիգ մը ընելով, ձեր գեղին մէջ կարելի՞ է նիւթա-կօմիտէ մը կազմակերպել:

— Նիւթա-կօմիտէն ի՞նչ է... հարցուց Ներսէս Արծրունին՝ ապուշ ձեւ մը ընելով:

Այոյնքն թէ Մասնաճիւղ մը ունենալ որ նիւթարկուած ըլլայ տեղւոյս կեդրոնական կօմիտէին, բացարկեց երիտասարդը՝ առանց հասկնալու թէ դէմը մարդը կը հեգնէր զինքը:

— Վա՛յ... դուք մասնաճիւղերուն Նիւթա-կօմիտէ՞ն անուն կուտաք:

— Այո՛:

— Է՛յ, նիւթաղբներ թէ կազմուեցաւ... ի՞նչ պիտի ըլլայ:

— «Նիւթաղբներ թէ կազմուեցաւ» ըսելով չը վերջանար, բարեկամս, պէտք է կազմել: Կը խոստանա՞ք:

— Ե՛ս:

— Այո՛, դուք:

— Կը զարմանա՞մ... ես որ առաջին անգամ ըլլալով կը լսեմ Նիւթա-կօմիտէ բառին նշանակութիւնը... ես որ տղէտ ու պարզ գեղացի մըն եմ, պարոն, ի՞նչպէս կրնամ ատանկ ծանր բեռ մը վրաս առնել: Երեւակայեցէք... ի՞նչ կրնամ ընել եւ ի՞նչ օգուտ կարելի է սպասել ինէ:

— Հոգ չէ. շուտով կը հասկնաք անոր նշանակութիւնը: Բաւական է որ ձեր գեղին մէջ քանի մը համակիրներ ունենանք... Այն ատեն կամաց կամաց գէնքեր ալ պիտի հասցնենք:

— Անպատճառ Նիւթա-կօմիտէն կազմուելէն ետքը պիտի ըլլայ այդ օգնութիւնը:

— Ի հարկէ:

— Միթէ ուրիշ կերպով չէ՞ք փոխարին:

— Ամենեւին... Նիւթա-կօմիտէ մը չեղած, մենք չենք կրնար ձեր գեղին մէջ ո՛չ ուժ ունենալ, ո՛չ ալ զէնք:

— Քանի որ այդպէս է, խօսեցէք ինծի ձեր պայմանները, յայտնեցէք թէ՛ ի՞նչ են ձեր կուսակցութեան հայեացքները, ի՞նչ է անոր ներքին կառուցողութեան նպատակը, միջոցը ու գործունէութեան եղանակը... յայտնեցէ՛ք որպէս զի Ներսէս Արծրունին երթում ու պարզեմ ամեն բան: Եթէ հարկ է Նիւթա-կօմիտէ մը ունենալ, անիկա կարող է հաւանութիւն տալ...

(Շարունակելի)

սէս պատրիարքին ու անոր խորհրդականներուն դիւանագիտական միջոցներով հայկական բարեկարգութիւնը իրագործելու մէջ գտած կատարեալ յուսախաբանութիւնին, ու եզրակացուց թէ, Եւրոպայէ ու ամէն կողմէ իսպառ լքուած, հայերը իրենց խնդիրը իրենց ձեռքովը միայն կրնան կարգադրել, միմիայն Հայկական միասնադ յեղափոխութեամբ: Կարելի էր գուցէ այս կէտին վրայ մեկ քանի վերադառնալ ինքնին:

Բանախօսը, ինչպէս առջի անգամուն, մէկէ աւելի անգամ ունկնդիրներու կողմէ ծափահարուածեց արժանացաւ:

Յետոյ խօսեցաւ Պ. Չիթճեան, իրեն բնաբան առնելով ու է ձեռնարկի մէջ ճշմարտութիւնը փրկաւ:

Պ. Չիթճեան, խօսքը բերելով ու է կուսակցութեան չպատկանող չեղբներու վրայ, դատապարտեց անոնց այդ մեկուսացեալ դիրքը ու պահանջեց որ, ու է հայ անհատ հարկ է որ յեղափոխական կուսակցութեանց անդամակցի, ու այդպէսով միայն կարելի պիտի ըլլայ առաջը առնել ցաւալի դէպքերու ալ, որոնք կրնան ու է կազմակերպութեան մէջ պատահիլ:

Ջանազան տեղերէ իրենց եղած խնդրանքներու համակերպելով, Պ. Պ. Խուչակեան և Չիթճեան կիրակի ցերեկ վերստին Սանդղալի մէջ պիտի բանախօսեն:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՈԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սքիւպ վիլայէթի արնափուտարընտան պէշ գապիլէ՝ 15 քիշի տէն իպարէթ պիր հէյէթի մուրախսէ վասիթասը իլէ՝ իսլահաթ իշխն արգուլարընը վէ թալէպէրինի պէյանլէ, թապալիէթ կէօսթէրմիշ օլտըզարընը Պապը Ալի Բուս վէ Աւստրիա էլիէրինէ պիտիւրմիշ տիր:

Տիկէր թարաֆտան պիւթիւն քօնսօլօլարըն՝ բարօրթլարը միւթապըզէն պիտիւրիւրար քի՝ Արնափուտարը գանտըմագ իշխն կէօնտէրիլէն թիւք քօմիսիօնըն զայրէթի պօշա չըգտը:

Մէջքիւր բարօրթլար Արնափուտարըն իսլահաթ գարշը կէլտիլէրինի սէօլլէյուպ, շէտիտ թէպալիլէր իթթիլազ օլընմատըզ անլէրէ իթաաթ իթտիր մէք միւսթիսիզ տիր տէյօլար:

— Պուկարիայա իլթիճա իթմիշ օլան Մաքթիճիալըլարան 400 քիշի մէկէթէթլէրինէ ալտէթ իթմիշ տէյու Պապը Ալիին պէյանաթը էսասսըզ օլտըզը Սօֆիատան թաստիգ օլընըյօր: Վէ արօի օլարագ, հիշ պիր քիմսէ թիւք քիայտ ալտէթ իթմէմիշ օլտը:

ղընտան մատա, թիւք մէջալիմինտէն գուրթուլագ իշխն հէր կիւն Մաքթիճիալար Պուկարիայա եէնի գաշանլար էքսիկ օլմայօր: Շու հալտէ անլալըլըյօր քի՝ նէ աֆլը շահանէ, նէ իսլահաթ սէօլլէրի վէ նէ տէ օլընան վատար էհալիէ էմիլիէթ իպրագ իտէմէյօլար:

— Շամտա Կէնիտէն քօրէլա գուհուրա կէլմիշ օլուպ, Մարտ 18տէն 20է գատար 28 քիշի էօլմիւշ:

— Տախիլիէ նազըրը Մէմտուհ բաշա իսթիֆա իթտի:

ՏԱԽԻԼԻԹԷ

Հարպիլէ նազըրը ժէնէրուլ Բաբրիքովըն 8—10 միլիոն ֆր. եէնի զամմիաթ իսթէմիշ օլմասընա՝ հէյէթի վիւքէլանըն գարշը կէլտիլի սէպէպլէ՝ Բարրիքովըն իսթիֆա իթտիլի մալիւս տիր: Պու սէպէպլէ իթի հաթթատան պէրու վիւքէլա վէ Ֆէլ. Բրէնս պէյինտէ ճէրէնան իտէն միւզաքէրաթ նէթիճէքէլի օլմամըշ տըր:

Մ. Տանէպին հարպիլէ նէզա էթինէ նամգէտ կէօսթէրմիշ օլտըզը պազը զապիթլէրին մէջքիւր բէք մուհիմ մէմուրիլէթէ թային օլընմալարը Ֆէլ. Բրէնս միւնասիպ կէօրմէմիշ օլմալլէ, պիր գաշ կիւնտէն պէրու մէսէլէ մուալլագտա գալմագտա ըտը: Տիւն Սօֆիատան վարիտ օլան խուսուսի թէլէկրաֆ. լարա, վիւքէլա բէյիսի Մ. Տանէվ գապիլէնին իսթիֆասընը Ֆէլամէթ. Բրէնս վէրմիշ օլտըզը պիտիւրտի իսէտէ, էլան պուսաթագատար, իսթիֆասմէնին գապուլ օլընուպ օլընմատըզընա տայիր հիշ պիր մալիւսաթ ալընմամըշ տըր:

Մաքթիճիալ մէսէլէսի սէպէպիլիէ բօլիթիգանին շու աագիգ սըրասընտա վիւքէլանըն իսթիֆասընէ հալիինին ֆիքրինի ֆէվգէլատէ իշղալ իթմէքտէ օլտըզընտան, պուկիւն եարըն գաթի պիր գարար իշիտիլէնէկի թապիտ տիր:

— Պուկար-թիւք սինօրլարը իւզէրինտէ՝ չէթէրին կէշմէլէրինի մէնն իթմէք պապընտա նէ՝ կէօնա մուամէլէ օլընտըզըն անլամագ իշխն բուս խաթիէ մէմուրլարը կէլմիշ օլտըզընա տայիր չըգան շալէալարըն էսասսըզ օլտըզը Սօֆիատան նիմ բէսի սուրէթտէ պիտիւրիլիօր: քէզա չէթէլէրին մէննի իշխն Պուկարիա հիւքիւ մէթի քէնտիսի տօղլուտան տօղլույա թէտպիլլէր էլէ տլմըշ օլտըզը պէյան օլընըյօր:

ՍԵՐՊԻԱ

Պէլկրատտան Մարտ 23 թաբիլի ալընան թէլէկրաֆ պիտիւրիօր:

«Գօսօվա Աննափուտարըն էսկի Սերպիայը խարապ իթմէքլէ իգթիֆա իտէմէյուպ, Սերպիա թօք:

րաղընա տախի թէճապիւզ իթմէքտէ տիրլիր: Չօք տէֆա սինօր մուհաֆըզլարըն իւզէրինէ հիւճիւս իտէրլէր, քէօլլիլէրի էօլտիւրիւրլէր վէ խանէլէրի սօյարլար:

«Սըրպ հիւքիւմէթի շու սուլհէրէրպէր հալիտէ, մէճպուր օլմուշ տըր քի սինօր իւզէրինտէ շու սըրա սաքէր թէճէմիւս իթսին: Ղիւրա ուզուլ միւտտէթտէն պէրու Սթանպօլա իթտիլի միւրաճաթալար ուճէրէսիզ գալմըշ տըր: Թօք լիցա վէ վրանեա գազալարընըն միւլէրիլէ վէ սաքէրիէ իտարէլէրի հէր կիւն Պէլկրատտան իմտատ իսթէմէքտէ տիրլէր:

Իշպուլ թէլէկրաֆըն սօն սաթըրլարը՝ Սքիւպտէ Բուս վէ Սըրպ էհալի պէյինտէ քիլիսէ վէ տէս. բօթ մէսէլէրի իշխն խուսուսէթին էլան տէվամ իթտիլիին պիլտիրիօր: Բուս Բաթիլիգհանէսի Սքիւպ քիլիսէսինի Սըրպլարա վէ քիլիսէնին էշեա վէ սէլվէթինի Բուսլարա թախսիս իթմիշ օլտըզընտան, հէր իթի սիլլէթին եէնիտէն հիտտէթլինմէսին սէպէպ օլմուշ տըր: Սքիւպտէ Սըրպլար Բուսլարտան բէք չօք իսէլէրտէ, բուսլար գատար զէնկին տէկիլտիրլէր: Մարուֆ տէսթթ Ֆիրմիլեանա վէ բուս Բաթիլիգի Տ. Եուսգիմէ գարշը նիւմայիլէր վուզու պուլմուշ տըր: Ֆիրմիլեան տէրհալ Սթանպօլա պիր շիքիալէթնամէ եօլմարշ տըր:

— Բէթրապուրկտան ալընան պիր թէլէկրաֆ. կէօրէ, Չարըն Սերպիայա իհտա իթմիշ օլտըզը 10 միլիոն առէն ֆիշէնկլէր Մալիստէ Սերպիայա նազլ օլընտագ ըմըշ, էկէր օ վապըթա գատար Պալգանտա միւսալէհէ իպգա օլընըր իսէ: Շու շալթ՝ Չարըն պու հէտիլէսի թիւքիւրա գարշը Սըրպլար սիլահալանտըրմագ էֆքեարը իլէ օլմատըզըն կէօսթէրիօր:

ԵՈՒՆԱՆԻՍՏԱՆ

Ախիլէն թիւքիա վէ Եուսնա. նիստան պէյինտէ գարարկիր օլան թիճարէթ ահտնամէսինտէն մատա, պու իթի տէօվլէթ պէյնիտէ պուղը սիյասի նօզթալար իշխն տախի պիր իթթիֆագ հա. սըլ օլտըզը Աթինատան պիտիւրիլիօր: Եանի՝ թիւք հիւքիւմէթի Մաքթիճիալատաքի Բուսլարա էն. վաի սուհուլէթ վէ մուսպէնէթ կէօսթէրէնէկի կիպի, Եուսնանիստան տախի՝ էկէր Պուկարիա վէ թիւքիա պէյինտէ մուհաթէպէ վուգու պուլուր իսէ, պի թարաֆ գալմագ ըմըշ: Մուսպիլի՝ պու մուզապէլլէլ Բուսնանըն տախի տախիլ օլմագընը վէ պու մագսէտլէ Ագազիատա գրալարըն կէօրիլէնէկին եազըյօր:

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԷԼԷԿՐԱՖԻԱՐ

Պէլկրատ, 25 Մարտ

Բէլգէգատտան ալընան հալմաթի. սաթա կէօրէ, պիր գաշ պին Արնափուտար շէհրէ հիւճուս իտէճէք տէյիւ իւշ կիւնտէն պէրու սէօլլէնի իմիշ: Թիւքարլար տէօհէլլէթ թիւքիւնարը գարաւըլար:

Պու շայէնըն սէպէպի շու տուր քի՝ Արնափուտար Չօթիլ քէօլլիւ. տէ թօրանուպ գարար վէրմիլլէր քի՝ էկէր իպահաթ իճրա օլընըր իսէ Բրէլգանըն իւզէրինէ հիւճուս իթսինլէր:

Սքիւպ, 26 Մարտ

Սէլանիքտէն, Սքիւպտէն վէ Մանաթըրտան ալընան հալմա. տիսաթա կէօրէ, Պանգ Օթօմանըն շէօպէլլէրի թէսիսինէ պաշլանրիլիօր ըմըշ:

Կէզա օրման պէքիլէրի իշխն սէր միւքէթիլլէլ հիւսի բաշանըն թանգիմ իթտիլի ճէտպլին ահ բեւմը լճրա օլընմայա պաշլամըշ. օրման պէքիլլէրի մահէլին քէօլլիլլէրինտէն սէլիլէնէքէր:

Լօնտօն, Մարտ

Պէլգիւզը 10 զապիթլէրտէն մատա, պիր չօք Հօլանտալը վէ Շուէտիլ վէվաթ՝ Մաքթիճիալ ժանտարմաթընը թէլլէրի իշխն թիւք տէօվլէթինտէն մէմուրիլլէ. թէ տալլէթ օլընմագալար:

ԼՍԱՐԱՆ

Շատերու թախանձանաց վրայ Տ. Խուչակեան և Տ. Չիթճեան կը բարեհաճին երրորդ անգամ ալ վառնալի հայ հասարակութեան առիթ ընծայել զիրենք լսելու:

Այս հազուադէպ առիթէն օգտուիլ ուզող ազգայնոց կը յայտարարենք թէ վաղը (կիրակի) ժամը 1ին պիտի սկսի բանախօսութիւնը Սանդղալի մէջ, ուր օթեակները միայն իգական սեռին պիտի յատկացուին:

ԹԱՏՐՈՆ «ՍԱՆԴՐՈՒ»

Վաղը կիրակի գիշեր պիտի ներկայացուի Վ. Ա. Ռ. Ի. Թ. Ե. խմբին կողմէ առաջնորդութեամբ Տիւն. Մառի Բասկաթէլլիօրի ՖՕՍՖԱՐՕ, եղբերգ 6 արարած, խիստ ծիծաղաշարժ կատակերգութիւն մը, պարեր եւ երգեր:

ԳՐՊԱՆԻ ԵՐԱՋԱՀԱՆ

Այս փոքրիկ հրատարակութիւնը որ փոքրագիր 38 երեսներէ կը բաղկանայ, կը վաճառուի Ա. Զարպանալէնան գրաւմանոսոցը:

Գին 50 ասնգիմ

Одговорникъ Н. Драгулевъ

Печатница Взаимность Варна.